խնդրում եմ յետ կենալ յարձակողական գործողութիւններից, պահել վրաց զօրքերը նրանց կեցած այժմեայ դիրքի վրա, իսկ սահմանների հարցը լուծել խաղաղ համաձայնութեան ճանապարհով։ Ցիշեցնում եմ ձեզ ձեր սեփական հանդիսաւոր յայտարարութիւնը, յունիսին, Նոյ Ռամիշվիլիի, Ահարոնեանի և Խատիսեանի ներկայութեամբ, թէ՝ Վրաստանը աչք չունի Լոռիի վրա և դրաւում է նրան ժամանակաւոր կերպով երրորդ պետութեան գրաւման առաջը առնելու նպատակով»։

Թէ ինչով կը վերջանար բողոքագրերի ու հեռագրների այս փոխանակութիւնը, դժուար չէր գուշակել. վրաց կառավարութիւնը մի կողմից պահանջներ էր անում, սպառնալիքներ կարդում, միւս կողմից տենդագին գինուորական պատրաստութիւնների մէջ էր, ուժեր էր հաւաքում Մանահնի ու Վորոնցովկայի շրջանում և պատրւակ փնտռում, որպէսզի հնարաւոր ընդհարման պատասխանատուութիւնը ձգէ հայերի վրա։ Վերջին խմատը ունի Ն. Ռամիշվիլիի 23 հոկտ. նամակը Ջամալեանին, որի մէջ վրաց արտաքին գործոց նախարարը հաղորդում է. «Քննելով ստեղծւած դրութիւնը՝ Վրաստանի կառավարութիւնը յանձնարարեց ինձ հաղորդելու ձեզ, որ եթէ հայկական զօրամասերը անյապաղ չպարպեն Քորինջ—Ցաթեր գիծը կամ եթէ յետագային դրաւեն որևէ հողամաս Թիֆլիսի նահանգի սահմաններում, վրաց կառավարութիւնը կը համարէ այդ պատերազմի յայտարարութիւն Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմից, որի վրա կընկնի երկու հանրապետութիւնների համար ստացւելիք կորստաբեր հետևանքների բովանդակ պատասխանատուութիւնը»։

Եւ զինուորական գործողութիւնները սկսւեցին էլ. զօր. Ցուրուկիձէի հրամանով, հոկտ. 23-ին, Գոգուաձէի գրահապատը ռմբակոծեց Շընկիս գիւղը, և վրացի զինուորները ընդհարում ունեցան հայ գիւղացիների և այդ շրջանում գտնւող հայկական փոքրիկ զօրամասի հետ։ Հոկտ. 26-ին Գոգուաձէն իր գրահապատով անցաւ մինչև Հայրում և պահանջեց հայ գիւղացիներից ճանաչել Վրաստանի իշխանութիւնը։ Մանր դէպքեր տեղի ունեցան և ուրիշ կողմեր։

Մթնոլորտը խտացած էր՝ պատրաստ պայթելու։ Դրան նպաստում էր վրաց ղեկավարների յոխորտ դիրքը։ Հայ-վրացական սահմանային վէճը դարձաւ նաև Վրաստանի Խորհրդարանի հարցապնդման նիւթ, և արտաքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին «բոլոր թիւրիմացութիւնները վերացնելու նպատակով» յայտարարեց, թէ «Թիֆլիսի նահանգը անվիճելիօրէն համարւում է Վրաստանի հող», իսկ զինուորական նախարար Գէորգաձէն աւելացրեց, որ ինքը «զէնքի ուժով կը ճնշէ ապստամբութիւնը»։

Բարեբախտաբար, վրա հասան դերմանացիների արևմուտքում կրած պարտութիւնների լուրերը, զօր. Ֆոն-Քրեսի հետ կապւած յոյսերը սկսեցին թուլանալ, և վրաց վարիչները խոհեմութիւն համարեցին զսպել իրենց ռազմաշունչ եռանդը։

Մի ուրիշ դէպք նոյնպէս իւղ լեցրեց հայ-վրացական փոխյարաբերութիւնների խարոյկի վրա։ Հոկտ. 17-ին Վրաստանի արտաքին գործոց